էր. և նօմոս*) գրեաց ոչ նեղել զՔրիստոսակրօն հաւատացեալսն: Յաւուրս սորա կարգեցան յեկեղեցիս Քրիստոսի՝ ժամ՝ պատարագ՝ պահք և կարգ եկեղեցականք. Սա ջրգողեալ ցաւօք մեռանի:

Անտոնինոս առաջին սկսաւ յամի Տեառն ՃԽԳ. ինքնակալեալ ամս ԻԲ. և ամիսս երեք: Կոչեցաւ սա Գթուս՝ որ է գըթած. և վասն այն՝ կոչեցաւ գթած, զի ոչ դարձոյց զերեսս յումեքէ խնդրողաց ինչ 'ի նմանէ: Սա էր փեսայ Անդրիանոսի կայսեր: Սա հրամայեաց մի՛ նեղել զաշխարհ վասն հարկի. այլ չափաւորապէս առնուլ: Սա պարսպեաց զՕռոտոս քաղաքն՝ զոր յառաջն Կոլօսիա կոչէին՝ որ է պատկեր միաձոյլ, զոր եդեալ էր 'ի վերայ Ր. պղջոյն, զոր յետոյ Մաւին քակեաց և Եբարձ զայն Գ.Ս. բեռն պղինձ. վասն կռոցն կոչէին զկղզին Կոլօսիա. առ

(*) Օրէնք. հրաման. հրովարտակ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան